

Մայր Երկրի Կոմիտեի Կառավարության  
Պատկերասրահի Բաժնի Կառավարություն

ՆՈՐ ՇՈՐԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՆՆԵՐՈՒ

— №/ա. 1 —

323.1

Գ-13

Գ-15

— ≡ ԴԱՏԱՍՏԱՆԻ

ՕՐԵՐ ≡ —

ՍՈՐԻ ԶՈՒՄԱ ՆՈՐ ՇՈՐԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՆՆԵՐՈՒ

ՀԵՂԻՆԱԿ

Ա. ԳԱԲՈՒՋԵԱՆ



323.1  
Գ-13

Կ. ԳՈՂԻՍ  
1918



ԿԸ ԶՕՆԵՄ ՍՈՑՆԻ ԶԱՄԵՍՏ ԳՈՐԾՍ  
ԱԶԳԻՍ ԳԱՇՏԵԼԻ ԵՒ ՄԻՐԵԼԻ ՆԱԿԱՏԱԿՆԵՐՈՒՆ  
Յ Ի Շ Ա Ց Ա Կ Ի Ն



6148  
41

9(47.925)1.522  
947.925 «1915»

# ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԵՐ

## Ա. ՄԱՍ

Քուրքիս Ելմարիս ազգական մը եզտն է անամբն աններու, մարդասպաններու, լիբր գողերու և գողանալարոյ հարստահարիչներու: Արժանաւոր զինակից մը դարձաւ: Քայլ զերին Լուկասեան ջարդերը անհրաժեշտ ըրած են Աւրազական ցամաքամասին արտաքսել այդ սպեռ ու սղակից հրոսկը: Լուկասը պետք է ունենան ինչ որ պատմու թիւնը պարտական է իրենց: Քուրքիսին շատ աւելի իրաւունք ունին անանք սպրեւու և զրանն ինքզինքնին կոտորակել լաւ ստղանկով մը: Ուշ կամ կանուխ Քուրքիսուն ածիրները գատարան պիտի գանեն, և անանց գողանները արինաւոր սերերուն պիտի վերագործուին:

ՌԻԻԼՍԵՆ

## ՅՈՒՂՈՒԱԾ ՄՐՏԻ ՄԸ ԽՕՍԲԵՐԸ


### Պարուննե'ր, (\*)

Ձեր մէջէն ամէն անոնք որ քիչ թէ շատ զրազեաի ձիրքերով օժտեալ էին, այսօր զնտանի մութ աչքերնիդ լոյսերու բացած փութկոտորէն ամէնքնիդ թուղթի մը, թերթի մը ծայրը կառչած որպէս թէ զրիչ կը շարժէք: Բայց շարագրելէ աւելի ինքզինքնիդ կը քերթէք...:

Ան հիմայ, ձեր գունափոխ գրիչը, ան՝ որ երկար ատեն լուռ էր մնացեր՝ արտորի մահասփիւռ օրերուն, կը բարբառի, կեանք և արիւն ցոյց կուտայ և մերացեղ բազմաշարչար վիճակին վրայ կը ցաւակցի, կը վշտակցի, կը սգակցի և

(\*) Այս զիբր գետած է ամէն անոնց համար՝ բլլան պատանի վրայ բլլան անպատանի երբ, մեր արիւնքն մէջ մաս են ունեցեր, կրնան վրանիճ առնել:

A 41640



յորդ յորդ արցունքներ կը տարափէ : Եւ , այս վեհագնիւ և շարշաշ արիասանց ցեղիս կրած սրտաճշմոք , չարան շարան , անպատմելի սողորսուք ցաւերուն և տառապանքներուն հիմնական դարձաններ , փրած և ծիւրած անբուժելի շարաւածոր վէրքերուն՝ քաջարուեամ վիրաբոյժներու պէս որպէս թէ շուտորոյժ բալասաններ կը դեղագրէ , երբ անդին մէկ միլիան եօթը հարիւր հազարէ աւելի պատկառազու թիւէն հազիւ հող մէկ երրորդ ողջ-անձ թիւ մը մնացեր է , ան ալ քաղցէն և անբերելի տաժանքներէն , ծանրածանր տուայտանքներէն հալած , մաշած , կմախք դարձած՝ մարդու երեքուն ստուերներ , աշեսն ազօր գամքած , շորցած տերեւներ , որոնցմէ հաւանական է որ նշանակելի դումար մ'եւս իյնան դիտապատ փութած ճամբաները՝ այս երկրին յատուկ ուղեւորական աննպատ և դժնշակ պայմաններուն բերմամբ :

Եւ եղեր էք այսօր , երկնատաք և լուսամիտ գրչին պատիւր ձեխտակով , գրչելու տեղ կը շաղփազփէք : Մեր սրտերու բոցալիզու կրակը մարելու տեղ կը հրահրէք : Ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ցաւ առթող մեր մեծ վիշաք լալուտեղ կը հեգնէք : Դարիւ , դարիւ սերունդներ ապրող , զանգուածային հոյակապութիւն ունեցող մեր մեծ առգը յարգելու տեղ կ'անգամնէք , երբ կը գրէք մեզ գրչի ճգճիմ հարուածով մը — ա՛լ սնցեալը մոռնանք — . . . : Գո՛ւք մտաւորական Թուրք պարոններ ձեզի կ'ուզղեմ խօսքս , — ինչպէս մոռնալ , անմահ և սրշատելի մեր նահատակ եղբայրները , քոյրերը և մանուկները , մայրերը և հայրերը և ո՞րքան — անհաշուելի , անթուելի . . . :

Մոռնա՛լ անոնց մէջէն — Վարուժանը , Սեւակը , Սիսեաներան , Զարդարեանը , Խոսիակը , Ակնուհին , Տօբ , Փաշայեանը և ուրիշներ , ուրիշներ — մեր անմահ խնկելիները՝ մտաւորական մեր վաղուան անկախ Հայաստանի ամբակուռ հիմերը , որոնք խժողութօրէն ջարդուեցան մէկգմէկէ աւելի քսամեկի՝ ձեր Թուրք արտոսապանձ անոպայ լեռնականներուն ձեռքովը : Հապա Վարդգեսն ու Զօհրապը , այս դուք մը Սօմ :

մարտիրոսագրուած անմահ երեսփոխանները, — մէկը սրտի քաջութեան աննուած մարդը, միւսը մտքի և օրէնքի անզուգական մարդը, — որոնք իրենց ուղեւորի տարագիր կառքերէն զուրս քաշուելով՝ պաշտօնական մասնաւոր հրամանով մարդակերպ ճիւղներէ բղքուեցան գէշագէշ իրենց բնդածին ձիրքերուն համապատասխան փառքովն ո՛ր պատուովն անմահանալով : Մէկուն քաջուճիւնը փերթ փերթ յօշեցիք լերդ լերդ արեան ճապաղիքներով . բայց դեռ այսօր այդ սիրտը վրէժով լեցուն կ'ապրի մեր մէջը, զի այդ սիրտը ազգի մ'էր, որ էր երբեմն անոր մէջ տրոփեց : Միւսին մեծութիւնը պանծացուցիք բիրի և լախտի բիրտ միջնադարեան հարուածներով . բայց մտքի այդ մեծութիւնը՝ ինկածուրեան մը քոյ՛ գերագոյնս մեծցաւ, զի այդ մեծութիւնը ազգի մ'էլ որուն մէջ ծնաւ մեռնելով՝ յետոյ փառաւոր ապրելու համար :

Ո՛ր թուրք զրչի ընկերներ, ունեցա՛ք, խոստովանեցէ՛ք անկեղծօրէն, մէկ հատիկ մը գոնէ այդ փայտքեան և մեծութեան սրտի և մտքի տէր մարդը :

Ունեցա՛ք, ձեզ կ'ըսեմ, մարդ մը որ այդ սրտէն կրելով զնդակ մը շաջեցունէր էնվէրի մը, թէլադի մը ազգակործան սրիւնուշտ ճակատներուն : Ունեցա՛ք այս տեսակ դադարկարուպաշտ անձնազո՛հ մարդ մը, ո՛չ, երբէ՛ք, երբէ՛ք : Ունեցա՛ք մարդ մը որ միտքը կրէր իրեն նման մրտք կրողներուն անիրաւ դատին պաշտպան կանգնելու, ինչպէս շրաւ Տրէյֆի սի մը էմիլ Չօլան : Ի՞նչ կ'ըսեմ, մեր դատը Տրէյֆիւսինը չ'էր, այլ լման ազգի մը բնաջնջման հրեշային դատ մը : Ունեցա՛ք, պարոններ, այս միտքէն մարդ մը, ո՛չ երբէ՛ք : Ակա՛յ, ձեր անյիւրյն բարկենդանն մամուլը : Այո՛ գիտենք, ունեցա՛ք հերոս բանակ մը ջարդարար — կիներու, անղէններու և մանուկներու համար, որոնցմով սոսկ կրնաք փառաւորուիլ Յեկեղեղներու յաղթանակին պժգայի դասինին խլած բլլալնուդ համար : Այո՛ գիտենք, ունեցա՛ք բթամիտներու անբանացած բանակ մը, քաջակրօմ, որ առանց նպատակի գնաց նետուեղաւ սպանդը մեռնելու, կոյր համազումի մը անդրաշխարհութիւն հուրիններուն սիրոյն . . . :

Ո՛վ Թուրք գրչի պարոններ, այս տխրասարուռ եղերա-  
ղէպ'որ, մենք որ մեր կամուսը բանտէն՝ ինքզինքնիս ծած-  
կած մարդօցմէ, մեր սուններուն մէջ փակուած ահի զողի մէջ  
փռնչալով լսեցինք, դուք որ արձակ համարձակ, ազատ,  
անարգել արտասահմանի բոլոր լուրերուն օրը օրին տեղեակ,  
միթէ չի՞ լսեցիր: Այո՛, լսեցիր, մինք այդ քաջ գիտենք—հայ  
մտաւորական և ոչ մտաւորականներուն միահամուռ առանց  
խտրի մեծ և պղտիկ վայրագօրէն խողողուիլը—Այո՛ դիտենք  
ձեր այդ մասին տեղեակ ըլլալը—անոնց սրտածմլիկ մանրամաս-  
նութեանց և իրենց զղուելի և սարսուալի բոլոր մռայլապատ  
դիւային գազանիքներուն— կատարուած ձեր այնչա՛փ սի-  
րելի ապահովութեան!! արթուն և հոգածու շանազգեաց ստա-  
հակ ոստիկանապետ, ոստիկան և ոստիկան-զինուորներու սո-  
վալլուկ խուժաններու, մեծ և փոքր աստիճանաւոր անձերու,  
զինուորներու կողմանէ բացարձակ անխղճութեամբ, որ լե-  
ռան անսուաղ արիւնարրու գազաններու վոհմակնիւրն իսկ  
չպիտի ջատղէին այնչա՛փ անխնայ: Եւ այսօր, ամէն աստի-  
ճանի վրայ գտնուողներ՝ Ալի օսմանի այդ համբաւեալ զա-  
ւակները բարձրագոյն հրամանաւ կամ իրասէով պատուա-  
նիչուեցան, որոնք կուրծքերնուն վրայ կախ տուած կը ճո-  
խան, կը ճոխճեն ի մեծ ուրախութիւն իրենց ազգին ու ըն-  
տանիքին:

Այն անմիտ հրէշներ, աստնք նշաններ չեն որ կը կրէիք,  
այլ ձեր կործանումին իսկական պիտառութիւնը... Ատոնք  
վարձատրութիւններ չէին որոնցմով կը վարձատրուէիք, այլ  
վաղուան համար ձեր իսկ մահապարտի անհերքելի որոշիչ  
փաստերը:

\* \* \*

Ո՛վ Թուրք մտաւորական պարոններ, այո՛, բոլոր մթա-  
կուռ այս դաւերուն տեղեակ էիք, չէք կրնար ուրանալ:  
Երբ, այս քստմնելի բոխտու գուժկանքը կայծակի արա-  
գութեամբ համայն եւրոպեան քաղաքակիրթ աշխարհը երկ-  
բաշարժի մը նման ցնցեց սրտեր թունդ հանելով, և որ դուք  
այսօր անոր ամենի զայրոյթի բաւոնչքին ներքեւ քաղաքա-  
կանապէս և զինուորականապէս անանկ և քայքայուած փո-

խանակ գիղջի գալու, երկրիս ունակոյթ դարձած շողոքորթութիւնէն փախ տալով, չ'ըսեմ Իզէթ փաշայի բարեխնամ կառավարութիւնը— այլ ըսեմ նախորդ դահլիճին երկրորդ տպագրութիւնը— նստած օրէն արդէն նոր դաւեր լարել սկսաւ հակառակ անոր որ այս պահուս Պետութիւնը մազկուինչ վրձնական հանդիւններու մէջ կը գալարի, աշխատելով փախյնել մէկիկ մէկիկ, և որոնք— ցեղիս ճակատագրին հետ խաղացող այդ չտրագործ լակոսներէն— Թէլաղներ, Էնվէրներ, Պետրիներ, Ազմիներ, Նազմներ, Իպրահիմներ, և դեռ ինչեր, ինչեր, որոնք անպատիժ և անարգել հոս հոն տարազնած Հայերու արիւնով դիզած անհատնում հարստութիւննին պիտի ուտեն ու խմեն ու պիտի վատնեն խօլառատ, ընդմիջտ Իզէթ փաշայի բարեխնամ և արդարասէր կառավարութեան երախտապարտ մնալով:

Ինչո՞ւ արդարութիւն, դուն ո՛ւր, այս մարդիկը ո՛ւր:

Ինձի համար արդարութիւնը բառ մ'է այս երկրին համար Հայուն չափ ջարդուած: Իսկ Հիւկոյի մը համար— Թըրքութիւնն է աստուածային մէկ սխալ ստեղծագործութիւնը:— Պարոններ կ'աշխատիք, ջան ի գործ կը դնէք, ձեր մտմուլով կը ճայթիք, կը սլայթիք որ մեզ պէս քաղաքակրթութեամբ Հայ, Յոյն և Հրեայ ժողովուրդներուն վրայ տակաւին տիրէք: Անքրտինք, հանգիստ ապրելու համար, ձեզի մեկնաշնորհ դարձած պաշտօնէութիւնը ձեռքէ չի հանէք. Բայց կը կարծէք թէ բնաբանիս հեղինակը՝ Մ. Ուիլսըն պիտի հաւանի որ այսքան դարերէ ի վեր տանջուած, չարչարուած զոյգ մը խաչիւր ձեր քմահաճ կամքին թողուին:

Այդ՝ ինքզինքնիդ միտթարելու տպագրիւն յոյսը թողեցէք այլեւս: Վարչութիւնը մարդով կ'ըլլայ, ահա ձեր մարդերը մէջտեղն են: Դուք մարդ չունիք...:

\* \* \*

Պարոններ, ի՞նչ է Պետական կազմը, գիտէ՞ք: Պետական կազմ մը յօրինուած կ'ըլլայ մեքի և աբի տէր ուղղամիտ մտքուր անձերէ, ոչ թէ նախորդ ոճրապարտ դահլիճին ըն-

բրձնու մովր սև խոււրկնու (bande-noir) նենգամիտ, կաշա-  
ռակեր և զեղծարար չանձերէ :

Գիտէ՞ք, պարոններ, զինուորագրութեան ինդրոյն առթիւ  
որքան կաշառքներ տրուեցան Հայ, Յայն և Հրեայներէ, սա-  
չորս տարուան ընթացքին մէջ, ձեր անկաշառ և խղճամիտ!!  
զինուորագրութեան ճիւղերու պետերուն և անոնց ստորա-  
դասներուն : Վկա՞յ— Ամբողջ քրիստոնեայ զինուորներս . . . ,  
Քայց եթէ մեզ առարկուի զինուոր ըլլալով կաշառքէ զերծ  
մնալնիս, մենք ունինք սա հակիրճ և կտրիճ պատասխանը :

Ա.— Այս երկրին մէջ քրիստոնեային զինուորութիւնը  
տանջուիլ, ամէն օր մեռնիլ և ջարդուիլ էր : Ապացոյց— Ձեր  
վրիժառու անիծեալ ուղեղէն բղիսած գործաւորական վաշ-  
տերու կազմութիւնը, ուր քրիստոնեայն թողուած էր հոն,  
ամայի լեռները, մերկ, նօթի, բոկոտն և ծանրածանր ան-  
հանդուրժ սպօրինի աշխատութիւններու տակ, որոնցմէ ե-  
րեք քառորդը թշուառութեան մէջ մեռան, կորան և մեծ  
մաս մ'ալ ջարդուեցան սրտածմլիկ պարագաներու տակ :  
Բնականաբար սրգարացի էր փախստական մնալը, զի ոչ ոք  
գիտակցարար իր իսկ ձեռքովը գերեզմանը կը փորէ . . . Այս-  
պիսի զոհուողները և փնաւողները պարտաւոր են անձնիւր  
և կամ պարագաները զատ զատ զատ բանալ կռաւարու-  
թեան դէմ : Բոլոր կաշառք սուտղներն ալ յանուն արդարու-  
թեան պէտք է զատ բանան և ետ պահանջեն իրենց փնաս-  
ներովը . . . Պէտք չէ որ այդ կողոպտիչ հրէշներուն կոկորդը  
բնիոն մ'իսկ թողունք :

Բ.— Մենք քրիստոնեայներս՝ ի մասնաւորի Հայերս, ին-  
չո՞ւ մեզի բռնի զինուորագրեցիք, իրբև Սահմ. երկիր!! ա-  
ռանց մեր կամքին դիմելու : Ձի մեր կենսական շահերուն  
հակառակ էին զինուորագրուելնիս : Մենք թշնամի չուէինք,  
անոնք որ մեզի թշնամի ցոյց կուտայիք, ընդհակառակը մեր  
բարեկամներն էին : Մենք լոյսի պաշտօնականներ՝ երբէք որ խա-  
ւարապաշտներուն միանայինք : Եւ չիմալ, ալսքան անհաշիւ  
զոհողութիւններէն վերջ : Ո՛ւր որ ալ գտնուինք մէկ զինուոր



խակ չէնք կրնառ տալ, և այս մեր արդար իրաւունքը քա-  
լեյնելու հատար ո՛ր դուռը բախել ալ պէտք ըլլայ պիտի բա-  
խենք աներկիւղ :

\* \* \*

Պարոննէ՛ր, խօսքս ձեզ կ'ուզղե՛մ ճառագայթի մը պէս :  
Ունի՞ք այդ վերել յըշուած սրտի և մտքի տէր խղճամիտ  
անձերէն գոնէ մէկ երկու երէք հատ : Այո՛ ամբողջ ձեր վար-  
չական կազմին մէջ ունիք մաքուր նկարագրով՝ գոնէ մեզ  
երեւութապէս այնպէս ճանչցուած, Րիզա Թեյլֆիլ պէյ մը, Ան-  
ւեհ Րիզա և Այի Քեւեալ մը : Բայց ո՛վ ըսաւ թէ երկու, ե-  
րէք ծաղիկով գարուն կուգայ :

Ձեր վարչական մեքենան փոած է անվերանորոգելի ձե-  
ւին տակ, ապականութեամբ վարակուած որջ մ'է : Ի՞նչ ու-  
գուտ արդար և իմաստուն դռնի՞նձ մը, երբ նոյն պաշտօն-  
եայնէրը պիտի գործեն . . . : Փա՛ստ—Ձեր ստիկանական նա-  
խարարութեան շէնքը, և արդարութիւն բաշխող դատական  
հաստատութիւնը : Պարոննէ՛ր, ձեր այդ ստիկանատունը ժո-  
ղովրդոց ապահովութեան շէնքը չէ, այլ կաշառակերութեան  
մանուածապատ աղտոտ հաշիւներով միանձնուած խմբակցու-  
թիւն մը, ուր պոռնիկը և կաւատը պատիւ ունին՝ տեսնուե-  
լով գործերնին անմիջապէս առանց պատճառարանութեան :  
Իսկ պատուաւոր քաղաքային միշտ պիտի սոսկար այդ տան-  
ջարանը և աւելին՝ դժոխքը գործ ունենալէ : Վկա՞յ—Ամբողջ  
ժողովուրդ մը ձեզի . . . :

Այդ ապահովութեան շէնք չէ այլ մեր անձին իսկ ան-  
ապահովութիւն ներշնչող մղձաւանջը . . . :

Գատական շէնք, ո՛րքան փարսախներով հեռի իր բարձր  
կոչումէն, ինչպէս երկինքը երկրէն : Տեղ մը, ուր բացարձակ  
անիրաւութիւնը կը պոչտապանուի : Տեղ մը, ուր Հայոց ինչ-  
քերուն պաշտօնախն Կողպուսը, լքեալ գոյքերու, ծիծաղելի  
անուկին տակ կատերական բարեհաճ և բարեխիղճ յրսիշով մը  
կալիսներու և նեճմեհիս Մօշաներու հսկողութեան տակ կը  
դոշձադրուի արժնամիտ ժիրութեամբ . . . :

Այդ դատական շէնք չ'էր այլ փտութեան օճախ: Այդ արդարութիւն ըստ շէնք չ'էր այլ բախտախնդիրներու խաղարան մը: Նօրէն կը կրկնենք հոս, ցորչափ այս անուշադաս մարդիկը իբր պաշտօնեայ կան և կը մնան, արդարութեան բառը ծիծաղելի ըլլաւ մը պիտի ըլլար բերան առնել և յուսալը:

\*  
\* \*

Պարոններ, ձեր վարչագիտական այս նշանակուած կարողութիւններուն քով եթէ աւելցնենք մտաւորական դաւադիր նենգութիւնները, եթէ իրաւ գրիչ ունենաք պիտի սոսկաք և ամչնաք:

Այս եղերական դէպքերուն առթիւ որպէս թէ նողկանքով կը համակուիք և մերժելով կը մերժէք, համամիտ չը գանուելնիդ յայանելով: Բայց խնդիրը առանկ չ'է. սուտ կը խօսիք ծածկելով ակնհրեւ ճշմարտութիւնը: Մենք կ'ըսենք. դուք ամէնքնիդ այ արտով և մտնով համամիտ և մեղսակից էիք այս բոլոր գործուած նախծիրներուն, որն՝ երբէք որ ձեռնէ ծածկուած ըլլար:

Ամէն վատութեանց մէջ իսկ լաւին անլաւը կայ. դուք այդ անլաւէն էք հիմայ, — միասին գողցաք, միասին դաւեցիք, միասին եղևոնեցիք, միասին շնայաք — այսօր երբ ահաւոր բուրջիսի մը վճիռին դէմ յանդիման կուգաք, ամէնքնիդ սը բերանիդ կը սրբէք, անմեղի հովիբ առնելով կը թօթափէք ձեր ճիտին պարտքը եղող արիւնստ մեղքերը: Եւ այդ իրարու վրայ կը բեռնէք նեղ պարագային այնպէս մը, ինչպէս պիտի ընէին գոհնիկ անճարակ գողերու ողորմելի խմբակ մը, արդարութեան օրէնքին ճնշող, ճկմող, ճմլող ճիրաններուն աակ, մինչև որ իրենց ամբողջ գողօն գոյքերովը և ընկերներովը լոյսի մը պէս յայանուէին:

Ամէն վատութեանց մէջ վեհանձնութիւն մը բնաւ վեհանձնութեանէ մը գերադանց կ'ընայ համարուի: Մեծ կը համարեմ՝ պեղալովս արհամարհելով: Հանդերձ այն մարդը որ արճիճի մը պէս գիտէ պնդանալով տիրանալ իր վատահամ-

բաւ անունին մինչեւ վերջին շունչը աներկիւղ : Գուք այս  
վեհանձնութենէն ալ չունեցաք քիչիկ մը՝ քանի մը հողի :  
Ամէնքնիդ ալ մակերու պէս ծակամուտ եղաք, նապաստակ-  
ներու պէս խելայեղ փախ տուիք : Աս անուրի սպանդները  
երկուքով, տասնով չ'էին կրնար կազմուիլ . գործակից մաս-  
ւորականութիւն մը պէտք էր կրակին հրահրամ և վարադ  
եռանդին թափ տուող : Եւ դուք եղաք այդ մեղապարաները  
ձեր վարձկան գրչին շնասիրութեամբ գրպանելով, տեղւոյս չքաւոր  
քրիտոսնեայ աղջիկները զգլխեցիք դէզ առ դէզ թուղթերու  
խշրատքներովը : Ապացոյց—ամէն Թուրքի քով, գրեթէ մեծ  
մասը ունի իրբեւ հարձ, Հայ և Յոյն խարուած աղջիկներ... :

Ձեր այդ թուղթին հնարքովը անբարոյականութիւնը  
ցորենի հատիկներուն պէս ցանեցիք ձեր Գերման սիրելի բա-  
րեկամներուն հետ մրցակցութիւն բանալով . եթէ ազատա-  
գրու մը վրայ չհասնէր համայն Պոլսոյ իզութեան համը պիտի  
ճաշակէիք բռնութեամբ և կամ շլացուցիչ խոստումներով... :

Պարոններ . դեռ երկու տարի առաջ չ'էր որ ձեր հին  
չըսեմ դահլիճը այլ ըսեմ դահճարանին քաղաքականութիւնը  
Չերմաջերմ ծափերով կ'ողջունէիք ձեր մամուլին մէջ, այլ ևս  
րադիսցեալ տարրերուն հասկերաշխարհներ սնանկացած ըլլալը  
յայտնելով . այս՝ այն տիտուր պահերուն ուր յարածուն սաստ-  
կութեամբ աքտորը և Չարդը կը շարունակուէր Հայաստանի  
ամէն կողմ : Դեռ մեր սրտերուն և մեր մտքերուն վրայ քան-  
դակուած կը մնան, միահաղոյն խողովակէ բղխած, մէկ կա-  
ղապարէ թափուած ձեր արդի մասւորականներուն դահճա-  
րանին համամիտ և սրտակից ծափահարելիք ? Իսելանի և աղ-  
քօգուտ տեսութիւնները : Եւ առ այդ՝ հակառակ ըլլալնիդ  
պիտի հաստատուէր, գոնէ ձեր մէջէն մէկ երկու հոգի ել-  
լելով . չ'ըսեմ յանուն մարդկութեան, գոնէ երեւոյթները  
փրկելու սիրոյն, երկ և բողոքի բաւ լսրաէր և կամ չոյս  
հինգ գլխ սեւոտէր, արդէն իսկ ի վաղուց մեղքերով, սու-  
տերով, կ'ողծիւքներով սեւցած՝ ճերմակին բիծն անգամ չի  
մնացած՝ ձեր անց'դոյն անձեւոց թերթերնուդ՝ երեսին վրայ :

Եւ երբ էք այսօր, ա՛յս քան երկար՝ երեք տարուան լուսթեանէ մը վերջ, տունդ տօթանքն ունենալու կ'ըսէք մեզի- եզրա՛յր ենք, այլես անցեալը մոռնանք— . . . :

Մոռնա՛լ այս ամէ՛նը տասը օրուան մէջ, մէկ ամսուան մէջ, . . . Մոռնալ—այս բառը քանի երբ լսեմ, ամբողջ մարմնովս կը դողամ, մաշկերս ձիգ ձիգ կը փշանան, և գոգցես երակներուս մէջ արիւնս ու զեզս կը խուծէ, և աչերս դուրս ցցուած, դէմքս դասու՛մէս ժանտատեսիլ ծռթմռթկած ամենի ուժ մը կը դռնամ, և կ'ուզեմ այդ բառին վրայ դրո՛ն տալով կուշտուկուս մը զայն խեղդե՛լ ու խեղդել, . . . :

\*  
\*  
\*

Պարոններ, մէկ միլիոն եօթը հարիւր հազարէ աւելի Հայեր տեղահան ընելով օճախնին մարել, և յետոյ ջարդել սուբով, ջարդել քաղցով, խեղդել ջուրով . . . :

Չ'ըսեմ Հայ բլլալ, ալ բսեմ մարդ ըլլալ և մոռնալ այս սու՛ր բոլորը: Երբէ՛ք, երբէ՛ք: Երբէ՛ք որ մոռնանք:

Մոռացում մը այս քան շուտ մեզ համար պիտի նշանակէր ազգութեանցութիւն մը և մեր նահատակ խնկելիներուն անմահ յիշատակներուն քսուած թուք ու մուր մը:

Մոռնա՛լ այս բոլորը, բոլորը. երբէ՛ք որ մոռնանք մինչև ձեր սպառնայ սերունդը: Երբէ՛ք որ մ'ըր մաքուր և քաղաքակիրթ ձեռքերը այլևս արատաւորենք, ձեր արիւնտ ձեռքերուն մէջ . . . :

Մոռնա՛լ, այս դորձուած յայնաւրայի վանտալ հակամարդկային անիծեալ և անմոռանալի եղեոները — ջարդ, զնտան, կախազան, շարան շարան գետախոյն և խեղդամահ, երամ երամ թոպամահ և փետտամահ առնելնիդ, հո՛ւր և սրածութիւն սփռելնիդ: Ախ սօրադարձներ, աւերա՛կ, աւերակ դարձուցիք, դրախտալտը մ'ըր Հայաստան՝ ամէն դի, ամէն անկիւն, ամէն խորշ:

Դեռ հերիք չ'է:

Մոռնա՛լ, հրեշտակահանգէտ անմեղունակ մանուկները, որոնք արջառներու երամակին պէս ձեռ ընդ ձեռ հանգուց-

ուած, բայլ բայլ, հող հող դժոխսիսեռ սուխններուն խոշտան-  
գումներուն և շառտումներուն տակ երբ առաջնորդեցիք դէ-  
պի խորանկէշներուն գեհննա՛նուանջ կրակի մկտութեան  
տակ, և որո՞նք, ա՛խ ցեղիս սիրտը եզոզ այդ մանկունակ  
անբիծ ու անպիղծ հոգեակները, որոնց հուսկ նայուածքները  
գամերու պէս երկինք մխուեցան... : Հակառակ այս ամե-  
նուն, որ միջին դարու ոչ Չեղար Բարջխան, ոչ Ճինկիշ Խա-  
նը և ոչ իսկ ներոնը այս եղեանաթիւը ազատոյժը այնքան  
աննուէր պիտի բլլային սարքելու, որքան ապերասան սար-  
քեցին սա քսան դարուս մ'եծատիտզոս հրէշները: Եւ սա-  
կան, դարձեայ անդեայը մտնանք, ահպէս չ'է՞ : Ո՛չ, ոչ,  
երբէք որ մտնանք :

Պարոններ ձեր այդ ջարդած մանուկները, մեր նուխ-  
րական անկասութեան արքայան դատին վերապրումը պիտի  
բլլան, իսկ ձեր արիւնոտ դատին լուխո՛նական վրիժու  
կործանարար դատապարտութիւնը : Գ'եռ հերիք չ'է :

Պարոններ, մտնանք մեր պատուանդիր կոյս ազջիկ-  
ներու և մանկահարդ կիներու մծղնումները, բլկումները ա-  
մենախալտառակ խէնէշութեամբ քստմնասարսուռ, դործուած  
պաշտօնական և ոչ պաշտօնական հագուստներով անուպայ սի-  
կարեան հրոսակներու կողմանէ, որոնք Հայ գեղուհիներու  
հետ բռնի թ'եռ ի թ'եռ, արքած, մայեգնած, կատղած, պար-  
պատած կ'եռասի նման հասունցած կիրքերով՝ հայուհւոյն ան-  
փոխարին'ցի պատուոյն հետ կատակելով, ի՞նչ կ'ըսեմ, իրենց  
զո՛ները մ'երկացուցած, չն'թելով, պագչոտելով, շամբչելով  
կտամելով գուհէ գուհէ պտտկեցան դիւային կարմիր քրք-  
քիչներով : Սպային, զինուորին և ոտտիկանին ամ'նուն ալ  
չորս հատ, հինգ հատ, ուղածնուն չափ մասնակնեցան ա-  
նուանական կրքի այս դարհուր'ցի խրախճանքին : Եւ մերթ  
պահ մը նախանձելով մէկզմէկէ կռաւրտեցան, գզուրտեցան—  
այս իմս էր, սա քուկդ էր— դարձեայ կռիւ, յարենման  
կատղած, փրփրած շուններուն, որոնք էգին կտուէն հեւ ի  
հեւ կը վազեն շնորած դուրս ցցուած աչք'րով խելայեղ :

Եւ այս պատուի, կեանքի և ինչքի ոճրագործները գործեցին ամիսներ, ամիսներ... մինչեւ որ շարձո՛ղկն հրահանը իբրևնց կը պարտադրէր անինայ ջարդերը։ Աւ ջարդուեցան այս տարաբախտ չուսուուհիները գիրենք լկուղներուն ճապաւոր ձեւքերովը — գլուխներ, ծիծեր, սրունքներ ամբողջն ալ բաժան բաժան, կտոր կտոր, նախճամէջեր արեան ճապաղներով դուրս թափուած — կը դառնային՝ չուչանային և նազելի այդ աստուածային գեղանի դասակերանները, միսի, արիւնի և ոսկրի մէշմէկ բերդեր՝ քան կին էակի ճշդիակներ, որուն ի տես մարդ այնքան սոսկմամբ պիտի ահաբեկէր անհուն երազներու մէջ սահմակելով ընդերկար տանջ ի տանջ դալով :

Պարոններ, այդ իմ դժբախտ և ողբալի քոյրերուս պատուին յաղթանակը պիտի բլլայ, ձեր բնասնի յարկերուն բարոյական յաղթուողի մը անպատուութիւնը առ յաւէտ... : Անոնց կտոր կտոր մարտիրոսագրուած անբիծ մարմնոյն մեղքին անէծքին տոյժը պիտի բլլայ ձեր անունին կաւատը՝ ձեր տուներուն մէջ իսկ տեանելով ձեր աչքերուն առջեւ ձեր նշկահած կիներուն լկումները... : Եւ սակայն դարձեալ անգեալը մոռնանք և ձեզ ներելով եղբայր բլլանք : Ո՛չ պարոններ, կրկինին կրկնագոյնս փորձելը յիմարութիւն է : Մենք յիմարներ չ'ենք : Չենք կրնար այս բոլորը մոռնալ և ձեզ ալ եղբայր կոչել : Ձեր անդրանիկ սիրտիս համբոյններուն անկեղծութեան արխուրը հաւաստեցիք Սասնայի երեսուն հազար Հայերու ջարդովը և երեք հարիւր հազար միլիոն Ֆրանսի մնասովը... : Ձեր մեղրածոր լեզուին ծայրը իայթոց և գորովոտ դրջին մէջ ժանրը գոացինք այնչան դառն հիասթափումով մը ապուշ կրթած : Ձեր համերաշխութեան սիրոյ, եղբայրութեան և հաւաւարութեան դրջին կողմարը՝ մեր երակները եղան մինչեւ ցարդ, իսկ անոր թանաքն ալ մեր անվերջ արիւնները :

Այսօրուան մեր սրբացած սրբասուն մանուկներուն ողբալի խլիակները անգամ աչք անխիպ երեսներուն վրէժ կը

պօռան և որոնց զայրոյթը աճելով օր մը մէջմէկ սուխններ պիտի դառնան իրենց ոսոխներուն սրտին մխուէլիք: Գալով սիրելու մասին, կ'ընդունինք պարոններ, թէ կատարեալ զլջման հանդէպ, գձուձ է այն հոգին որ չի ներեր: Բայց այդ անհատական խնդիր է անջրպետներով մեր խնդրէն հեռի: Եթէ մենք ներելու մասին միամիտ յօժարը ունենանք, պարոններ վերը Աստուած մը ունինք որ բացարձակապէս չի պիտի ներէ. այդ տարբեր հարց որ ձեր աղլանը ներէ...

Պարոնե՛ր, վերջին խօսքս ձեզ, մտիկ ընելու շնորհ ըրէք: Մենք կ'ըսենք — յանցաւոր էք ազգովին մտաւորականով և ոչ մտաւորականով: Եթէ ինչո՞ւ, — ջարդելը ոճիր մ'է և ոճիրը յանցանք, զոյրսնալը և պատուի յոնարարուէր օրէնքին առջեւ թեթեւ կամ ծանր նոյնպէս առանց այլ եւ այլի ոճիր մ'է. սրբ, եթէ ասոնք իրրու օրէնք!! ձեզ հրամայուեցաւ, ինչո՞ւ այս անուգք գործը հոգի կտրած ի գլուխ հանեցիք: Եթէ նիւրախան օրհնիլ ձեզ անպարտ կը կացուցանէր, խղճի օրէնքին ինչո՞ւ ականջ չի տուիք: Արդե՞ք ականջ տալով ձայն չ'առիք, ուրեմն չմարդ մ'էք, ճիւղ մ'էք, ինչպէս կ'ուզէք որ դեռ պաշտօնի վրայ մնաք...: Կրնա՞յ պատճառարանուիլ թէ այս օրէնքը գիտցող չի կար, կարելի՞ էր միթէ այս տարրական օրէնքը չի գիտցող մէկը ըլլայ որքան ալ սղէտ մը եղած ըլլար իսկ: Միթէ՞ այդ ոճիրի և աւաւարութեան չօրհնիլ ձեր ցեղին հրամայուէր պիտի ընէի՞ք, այնպէս մը ինչպէս որ մեզ բրիք...: Այս արիւն-ուշտ պաշտօնական գործելակերպին մէջ կատարեալ միահամուռ կառնցողութիւն և զիսակցութիւն կայ: Ուրեմն գերազանս և ստորադաս պաշտօնեայ առաւել կամ նուազագոյն չափով յաստատելի այս սնաւոր օրհնու մէջ դատապարտելի է բոռին անարգարանայի բուն իսկական նշանակութեամբ: Իսկ գալով ձեր ազգին, այն ալ ոչ նուազ յանցաւոր է. ոմանց լուռ հանդիսատեսութեամբ և ոմանց դործօն մասնակցութեամբ, անուղղակի կամ ուղղակի՝ իր վանտալ պաշտօնեայ զաւակներուն այս չարայուշ և եղևնական արարք-

ներք քաջալերած ըլլալուն համար: Մշ ապաքէն իր ծոցէն ծնան աղ շարագործները, ուրննն լանցանքը տրախաքանօրէն ազգովին է: Այս տնտեսութեամբ մարդ չունիք, ձեր արդի փտած, զառամած, անդամալուծուած պետական կազմերնիդ վերաշինելու համար: Աւրննն արդարութիւնը կը պարտադրէ որ երիտասարդ Թուրքերը քաջուին արժանաւորագոյններուն թողով իրննց տեղերը:

Յարնաւ երթաք, բարնաւ չի գաք այլեւս . . . :

Դուք կառավարուող մ'էք, կառավարող մը չ'էք կրնար ըլլալ:

Մեծանուն դիւանագէտ՝ մ'եղ Հայերուս համար այնչափ անհունս պաշտելի կլասսորոնի մ'եծ խօսքը՝ ոճիրներու աստուածին՝ անիծապարտ կայգէթին խայտառակ պարտութեամբը այսօր իրականացաւ, որ ըսած էր ի վաղուց հակական կոտորածներուն առեփու սա մէկին մարդարէական խօսքերը — Աւերներնիդ կամ Քուրանիդ — Աւաջինը աւնուած է, երկրորդը ձեզ թողով իր իզճի համոզում: Աւաջինը տղու մը պէս վտանգաւոր գործածելիք և ամբողջ քրիստոնեայները և իսլամները ձեզի դէմ թշնամի բրիք: Ա՛լ ասկէց վերջ կրնաք կրթուիլ:

Ա՛լ երիտասարդ Թուրքերը թող դաս առնեն կառավարելը, փոխանակ չի գետցած բաներնին, գիտցածի պէս դաս աւանդելու, գրաստական յամառ ոճրապարտութիւնը ունենալու:

Պարոններ, մենք այլեւս Թէլագներով, Ալիներով, Վէլիներով զաղկելու ժամանակ չ'ունինք, և ոչ ալ այլեւս նըպատակ ունինք մելան և թուղթ սղառելու: Մենք գիտցանք մանաւանդ սա չորս տարուան ընթացքին մէջ թէ ինչպէս քարէն մարդ չի ծնիր, նոյնպէս ծուռ եղէգը չի շտկուիր:

Այս երկու ճշմարտութիւններէն որը որ կ'ուզէք վրանիդ կրնաք առնել, դուք ս'ի վատանամբաւ ջարդարար հրքէշներ: Կուսակալ մը, մանաւանդ բժիշկ՝ գիտութեան մարդ մը, որ տասնհեհինգ օրուան մէջ յիսուն հազար Հայ կրցած է



ջարդել : Պրալօ՛ . կատուն անգամ մարդ ջարդելու խղճու-  
հարուստներ պիտի ունենանք : Այս տեսակ ճիւղներ այս ազ-  
գին մէջ տեսանք . ո՛չ հին դարերու և ոչ ներկայիս ասանկ  
մարդերու անունը չենք լսած և ոչ մէկ ազգի մէջ : Ամէն ինչ  
բրիք , բան մը պակաս չի թողուցիք : Հայաստանը բուն ջար-  
դեցիք և բուն պղծեցիք : Մինչ հոս սիսթեմադիկ կ'ըստով  
կողոպտեցիք և անպատուեցիք մեր կիները և քոր'րը : Հոս  
ալ , Իզմիրն ալ Հայաստանի պիտի վերածէիք , բայց վերջոյ  
ձեր մեծ ոճրագործ քաղաքակրթուած վարպետը վիժել տուաւ  
կարգ մը քաղաքական հարկադիր պահանջքներէ տարուած :

Այո՛ , ամէն ինչ բրիք , բան մը պակաս չի թողիք , բայց  
ինչ օգուտ որ մ'եր սպասին անմարդի բողջանքը մարելու  
տեղ ա՛լ աւելի հրահրեցիք Մ . Ուիլսոնի ազատական տե-  
սութիւններով : Քանի՛ ցեղիս արիւնք ծովերու պէս խմեցիք  
նոյնքան ձեր գոյութեան արիւնին ծովը գամքեցուցիք . . . .  
Վաղը հայտնեալն սեղան կայ : Օ՛ն , առաջ , հոն հրամեցէք ,  
Պարսնե՛ր , դուք ձեր սուրով , մենք մ'եր գրչով . . . .

Կը տեսնուինք . . . .


Բ . Մ Ա Ս

Վ Բ Է Ժ Ի Օ Բ Ե Բ

Ազգիս շուրջ բազմաչարչար տա-  
րադրեալ Կ . Պոյոյ Պատրիարք Ա-  
մեն . Տ . Ջաւէն Ս . Արքեպիսկոպոսին :

A 41640

Ահա՛ , այսօր արտասուաթոր աչքերով ձեր սգակոծ սրբ-  
տերուն դաները զաշնելու կուգամ . ո՛վ իմ վերապրող եղ-  
բայրներս : Բժիշկի մը պէս ձեր սրտի համազարկին ունկն կը  
դնեմ ուշ և յուշ կորած , յսելով հոն՝ յոյզերու , ցաւերու ,  
վշտերու , խժալուր հազազներու շարքերը , որոնք նման հնո-  
ցի մը ճարձատող անգործն և կամ բարկածայթ մարդու մը  
կճրտուն ահուսխներուն պէս ձայներ կուտան ամբուռքի մը



պէս գոռարով .— վրէժ . . . : Անճիտուած համայնքի մը աղա-  
չաւոր ձայնները վրէժով կուռած , պնդուած օրէնքի մը հրա-  
մարտական պահանջքը կը դառնան , և առ այդ՝ մատուց-  
ուելով խոնարհարար թախանձալիր — Մ . Ռիլսընի , Լօրս  
ձօրձի և Գլիսլանսօի — բարւոյն և ճշմարտին՝ Երրորդութեան  
Խորհուրդին նման երրորդութիւն կազմող այս մեծ մարդե-  
րուն նկարագրատ պալատներուն բախելով , բան մը միայն  
կը պահանջենք .— վրէժ . . . :

Զի քաղաքակիրթ մարդուն վրէժը պատիժ է , իսկ պա-  
տիժը արդարութիւն : Գիտցանք տառապիլը , գիտենք նաև  
ապրիլը : Մարդն ենք կորսովի , արդար և ճշմարտ : Մեզի  
համար , մեր խռովեալ և ալեւտանջ սրտերուն խաղաղութիւ-  
նը վրէժն է . վրէժը միայն — պատիժը մեր դահիճներուն —  
գործադրութիւնը Ֆիզիքական , մահու սիւնին կերտանքը  
մենէ , առասանն ալ մենէ : Հուսկ հոնդիւնին պիտի ըլլայ մեր  
կեանքը և մեր անդարման վէրքերուն բոյժը՝ իսկ տոյժը ա-  
նոնց անհամար ոճիրներուն :

Մեր սրտին խորերէն կը պոռանք , կը գոռանք , ամէն  
սեռէ , մեծով պղտիկով — Կախաղան , կախաղան . . . :

Ո՛վ դատաստանի ահաւոր օրեր , վրէժի՛ սրբաշող օրեր ,  
դուք պիտի քաղաքակիրթ մարդկութեան պարծանքը ըլլաք  
և մեր գերութեան փրկանքը՝ իսկ մահազանգը մեր սաղա-  
յել դահճապետներուն :

Վրէժի՛ օրեր , երանելի նուիրական օրեր : Կեանք առ ,  
սթափէ , շութափէ , ո՛վ իմ զարմիս , արիւնիս թոյրը , դուն  
քոյր որ գայի՛ ի գայի՛ գալով , շարան շարան ժուռ եկար ,  
շիւալը շիւալը , թափառ թափառ , ոգեսպառ քաղցով , իսպառ  
մերկ , բոկոսն , սեւ ճակախդ գիրը կազմող՝ Արաբիոյ աւե-  
րակներուն , սուրբալ և ցամաքած քաղաքներուն մէջ ան-  
ծիլէն ծիլ ապրելով : Վերջապէս եկար քու պաշտելի խլեակ-  
ներովդ հաս՝ քու մայրենի ծոցդ՝ Մայր եկեղեցի : Վաղը դեռ  
հեռի չէ , երբ արդարութեան անասան օրէնքը յառեւրով  
չեշտակի գործվոտ դէպի ձեր արցունքոտ շամանդաղած սչ-

քերուն պիտի ըսէ .— Առաջ անցէք, ու ձեր վրէժի բոյոր  
 թափովը քաշեցէք պարանները, որ ահա,  
 կը կախուին ու կը կախուին,  
 Փա՛ւք քեզ վրէժի օրեր, փառք քեզ:

**Ա Պ Ա Գ Ա Յ Ի Վ Ը Է Ժ Ի Օ Բ Ե Բ**

Կ. Պոլսոյ պուլկարական հիւանդանոցի  
 շէնքի՝ իմ անկեղծ գրասէր բարեկամիս  
 տարագրեալ քաջարուեստ Տօթի, Բ.  
 Տիւանեանին:

Ո՛վ իմ արիւնիս աւելը՝ եղբայրներ և քոյրեր, եր-  
 թա՛նք, երթանք հեռուները, Տէրղօր, հոս հոն, ցրիւ ցրիւ,  
 պատառ պատառ, ցել ցել եղած, ցեղիս հարազատ արիւնով  
 կարմիրի ներկուած, դատարկ շորեր կան, տրցակ տրցակ,  
 խաիւ խաիւ դիզուած, գերեզմաններու պէս ահաւոր և խոր-  
 հըրդաւոր, պատերազմի դաշտերու դիակներուն պէս սարս-  
 ուսի:

Շորեր՝ դեղեցկին, տգեղին, մաքրարիւն ցեղիս, ուր տա-  
 րագիր լեռներու, ձորերու, ծմակներու վրայ լեռնանալով  
 բարձրայառ արանին նայող մզկիթներուն նման չաղգի մը ո-  
 ճիրին աստուածովը կը սրբանան. բայց վերջոյ անոնք կո-  
 թողը պիտի դառնան ազգիս անկախութեան դրօշին, որ պի-  
 տի ծածանի ա՛լ ծալ ի ծալ, իմ դարաւոր տոհմիս հայրենա-  
 բաղձ նուշ ու անուշ սրտին՝ մեծասքանչ հայկազուն Մանսիսի  
 խրոխտապանծ գազաթին վրայ:

Ո՛վ իմ ազգս, սիրելի և պաշտելի, վրէժի ապագան մեզ  
 կը կանչէ ու կը հրամայէ տիրական ձայնով մը որ երթանք  
 հոն, ձեռք ձեռքի տուած, ժողովենք մեր աղբրանց արիւնի  
 շորերը ու բերենք, կարկտենք ու կոկենք, մաքրենք ու  
 պահենք և յետոյ քայլինք համբերութեամբ ժամանակի ջը-  
 դասպան թիք-թաքին հետ— գործունեայ, ժիր, շէնչող —

աւերակները գիւղերու , գիւղերը քաղաքներու , խրճիթները կազմիկ տուններու և տունները հոյակապ պալատներու վերածած : Վա՛ղր , հեռու չէ , համբերութիւն . . . :

Ոսկե՛ճամուկ հագուտոնները բրդգդուած խորձունձ խորքերու փոխարկուած , բիւրաբիւր հոգերով հալու մտչ , սնամէջ յոխորտավիղ գլուխնին խոնարհած , ակնկոր , բոկոսն , մ'երկ , նքնած , կմախացած , զառամեալ , արցունքներու սահանքովր ուռեցւոր՝ բլշակնամ աչքերով , ցուբաին և բուքին տակ ձոխալով պիտի գան կանգ առնելու , ո՛վ իմ ազգս , ոգորմած և ներող , բարեկեցիկ պալատիդ դուռներուն առջև , յուզուած սրտի մը զղջումի մեղմ և աղաչաւոր ձայնովր գլխահակ — ինչպէս զղջացող մարդասպանը դատաւորին առջև — ոճիրի անցելոյն անչինչ մուրը ճակատին՝ մոյր պիտի բանայ ձեռքերը քեզի ո՛վ իմ գթասիրտ և վեհոգի ազգս :

— Ողորմութիւն , ողորմութիւն . . . :

Ու ապագան պիտի ներէ , և այդ խնամով պահուած ձեռք մը շորերը երկնցնելով պիտի անոր բռէ :

— Ա՛ս , ոճիրի քաւութեանդ ողորմութիւնը . . . :

Փա՛նք և երանի քեզ , ապագայի վրէժի օրեր :

### ՈՒՐԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՕՐՀԱՍԻ ՕՐԵՐԸ

Ո՛վ իմ արիւնխս ծուծը՝ դուն տարարախտ սգաւոր քոյր , ինչո՛ւ այսպէս նստեր ես , ծալսպատիկ բուերու պէս եղևրամայր կոծի կոծ թառաչելով կ'ողբա՛ս ու կ'ողբաս : Ինչո՛ւ չես երթար հււաքելու Տէրգօր՝ այդ ամենակուլ գերեզմանէն սկսեալ սմէն դի , սմէն խորշ , ծակ ու ծուկ դիզուած — գիակներու պէս հասակ առ հասակ գեանամած — խորձ խուրձ , ծով ծով անչնչացած քոյրերնուս վարսերը փեռ փեռ եզած տակաւին կը կենան , ա՛խ եղերակիանօրէն , զարհուրելիօրէն : Դո՛ւն քոյր պահ մը աչքերուդ ուղիօրէն հոսած յորդ յորդ . բորբ բորբ արցունքներու հեղեղները դադրեցնելով , զնա՛ բեր , ու քու անուշ ու քնքուշ մասներովդ

էլու առ հիւս յօսէ կուռ պարաններ, ամէն անոնց համար, որոնք աջ և ձախ փռեցին կտրիճներ, ապուցին ինչքեր և ախուցին վերջոյ սուգ և տրտմութիւն:

Ուշ չէ այն ցնծալի օրը, երբ Համաձայնութեան վիթխարեայ յաղթ բանակները՝ բարւոյն և ճշմարտին սուրինները մերկացուցած, ահաւոր հոգէառ հրեշտակներու նման պիտի հուպ ընդ հուպ տնկուին մեր դահիճներուն ապուշ կրթած դէմքերուն առջև—ահազնադղորդ թնդանօթի մը հանգոյց— այն ատեն պիտի պոռան, պիտի դռան. օ՛ն, փութացէք մեր ոտքերուն առջև շանց պէս շնթելով լիզ տալու, սող գալու, դուք ո՛վ լլվրը սիկարեան հարստահարիչներ: Ի՛նչ յանդգնութիւն, որ ձեր ոչ փաշայութիւնը այլ թռչալորքիւնը կ'ուզէիք յոխորտաբար չափել մեր աշխարհահոշակ ազնուականութեան հետ: Ի՛նչ յանդգնութիւն որ ձեր ժանիքոտ և ժահրոտ բերաններէն մեր քաղաքակիրթ հասցէին՝ ձեր ամենօրեայ նախագներուն չափ ճշդապահ հայնոյնչքներու ապերասան տարախով մը դոռ կանառկէիք: Ի՛նչ յանդգնութիւն որ ձեր անդուլ ժանգոտ ու գուլ սուրերը՝ անմեղներու արիւնովը շառագնած, կ'ուզէիք թեթեւօրէն չափել մեր երիտասարդ և կորովի արդարութեամբ հատու սուրերուն հետ:

Ուրեմն դրէք ձեր ոճրագարտ և շաղաշոյտ գլուխները մեր ճշմարտութեամբ փայլող սայր սուրերուն առջև: Գուք ո՛վ ականակուռ նշաններով հպարտացող բորենիներ, հեռացէք շո՛ւտ, շո՛ւտ հեռացէք ձեր այդ բազմած յափշտակիչ շառագեղ աթոռներէն: Ա՛լ բաւ չէ՛ր բազմաշարշար խաչի մը որքա՛ն և որքան որ արթնքիւնը և պախալը յօշեցիք մասունք առ մասունք. ծաղրեցիք պոռնիկի մը խննէշ ծիծաղներով— թքնելով, անարգելով, անդոսնելով— տարիք զայն նետեցիք ժանտաժուտ կոյուղիներու, աղբախուղբ ախոռներու և ժողխած շանփիններու մէջ: Չ'ունեցա՞ք խիպ, չ'ունեցա՞ք խիղճ որ առ կրօնք մ'էր՝ հօմայն քաղաքակրթութեան խորհրդանշանը, և նոյն այդ նուիրակամութիւնը փառաբանող

անդին հօր Եւրոպայ մը կար, որ այսօրուան պէս կրնար  
 ձեզ այնքան դիւր կերպով սանձել և սարսափ տալ: Զի խոր-  
 հեցած թէ ձեր գոյութեան չազգը կրնար գուղձ մը հողի  
 պէս իր կարչնեղ ազուռին մէջ սեղմել, լուծել և ճգմել, և  
 յետոյ անոր ածխէններէն նոր նոր, շէն ու բարգաւաճ քա-  
 ղաքակիրթ ազգեր յարուցանել: Դուք չի վախցածք, ճիւղա-  
 ներ, Հայուն և Յոյնին, այդ քոյր մը ազգերուն խաչերուն  
 ոսկիներէն և արծաթներէն լողարաններ շինել տուիք ձե-  
 րին թլփատ ձագերուն վարօցները լիւզ տալու: (\*)

Ախ դուք, ստորնասող իժեր, չի վախցածք այսպէս եր-  
 կու քաղաքակիրթ ազգերու նուիրական խաչերը ձեր տըր-  
 մուղ պայտերուն տակ բեւեռելու:

Բեւեռեցէ՛ք ուրեմն անոր սրբութեանը [և արդարու-  
 թեանը վրայ, ան՝ որ բեւեռողը կը բեւեռէ, չարչարողը կը  
 չարչարէ, մեռցնողը կը մեռցնէ, կախողը կը կախէ:

Եկէ՛ք ուրեմն հիմայ, ձեր այդ անարգած խաչերու ար-  
 դարութեամբը մտնանալու: Եկէ՛ք շուտ այսպէս գլխիկոր  
 շրուշակուած արդարութեան պատժող սուխններուն առաջ-  
 նորգած այս վայրը՝ հոս՝ Սուլթան Պայազիտի այս պատմա-  
 կան եղերավայրը, ուր երեք-չորս մերազգի հայ Յուշանե-  
 րու վատ և բուտ վկայութեամբ դուր տեղը կախազան էիք  
 բարձրացուցեր ֆան և միկ սրտի և մտքի տէր կարիճ արեւներ:

Եկէ՛ք շուտ հիմայ, կործանիչ յելուզակ չարագործներ,  
 ձեր դատապարտեալի ձերմակ պատանքներուն մէջ փաթ-  
 ուած, ձեր հետ առնելով երբեմնի ձեր վսեմափայլ բարբա-

(\*) Փողերանոցի հայ վարպետները զայս կը վկայեն թալանուած  
 եկեղեցիներէ և վանքերէ ոսկի և արծաթ — սկիհ, բուրվառ, խաչեր  
 և այլն հալեցնել տրուելով թէլազ և էնվէր շնածին վիճերուն ոսկեայ  
 լողարաններ շինուեցան իրր նուէրս Այս նուէրը թերթ կարդացողներ  
 կը յիշեն: Նայ վարպետները հաշուեյարդարութեան տուն կրնան  
 մեծամեծ ծառայութիւններ մատուցանել ազգին, իրենց թէ՛ վկայու-  
 թիւններովը և թէ տակաւին տարբեր մանրամասն լուսարարուութիւն-  
 ներովը:


րոս քղանցքներուն ջերմեռանդութեամբ խորին ակնածանօք ի համբոյր մատչող հայ Յուդաները, որանք ազնիւ ազգերնիս համբուրելով մտանեցին: — Արդի Հայրենիք օրաքերթ խմբագիրները՝ ազգադաւ դաւաճանները — Յովսէփիան չվարդապետը, որ երկու աւելի տարիներ եկեղեցւոյ Ս. Բեմէն հայ ժողովուրդին օրհնութեան տեղ անէծք տեղացուցեալ Ս. Հաղորդութեան տեղ կրակ ճաշակեցուց: Այս սև սքեմով սև երեսով սատանան որ իր հոյակապ Տաճարովը երկու աւելի տարիներ ժահրակաթ օձերու պէս սող տուաւ հայ նահատակներուն խնկելի յիշատակին վրայ հայհոյելով, և իր աջակիցը ունեցաւ Յարութիւն Մկրտիչեան և Արշալիր ամենաստօր, ամենագուհիկ ճիւղ մատնիչները: Այս հայ Յուդաներուն հետ միասին, ամէնքնիդ ձեռք ձեռքի տուած, ձեր ձեռքերովը կերտած ձեր մահու գործիքին վրայ, իմ նահասակ քորերուս հերքերէն պատրաստուած վրժանիւս տակուն պարաններէն կախուեցէք. և ա՛լ ճօճեցէք, ճօճեցէք ձեր հոտած խոզի մարմիններով:

Փա՛ռք քեզ դասաստանի օրեր, փա՛ռք քեզ վրէժի օրեր: Ո՛վ սիրոյ և եղբայրութեան համաձայնական յաղթ բանակներ և մարտանաւեր, ձեզ ազգովին երախտագիտութիւն և խոնարհութիւն: Ձեզ փա՛ռք և պատիւ, Ձեր ամենի՛ բարւոյն և ճշմարտին գորութեան համար:

Այս գորութիւնը մարդկային չէ, այլ աստուածային:

Այս պատերազմ չէ, այլ սուրբ յեղափոխութիւն՝ լոյսի և խաւարի կռիւ:

Փա՛ռք և բիւրաբիւր օրհնութիւն սու յաւէտ Ձեր յաղորդութեան:



## ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՂՐԾԵՐԸ

1. Երկու սրտեր (վեպ) զին՝ 6 զրուշ
2. Դասաստանի օրեր » 5 »

### Մ Ա Մ Լ Ո Յ Տ Ա Կ

1. Քայլեր (Իմաստասիրական ֆերթուած)
2. Աւերանք (Յուզիչ գրական կտորներ)
3. Առատուոց սէր մը (աղբիան մը յիշատակին փաղուած հետստրիւշարժ իրավեպ մը):

ՄԱՆՕԹ. — Տպագրական տար. իմաստասիրական սղութեան պատճառաւ առ այժմ չտպագրեցինք հրատարակելը զիներու անկուրը սպասելով:

» — Դասաստանի օրերը տասնեակ օրեր առաջ թէպէտ լոյս պիտի տեսնել, բայց գրաշարի զգալի պակասը մեզ հարկադրեց յապաղեցնել:

» — Դասաստանի օրերը կը ծախուին ամէն ցրուխչներու և գրավաճառներու քով:

Կեդրանատեղին է՝

Զաքմաքճըլար Կոթուշը, հանրածանօթ Զարդարեան գրատունը:

Մեծաքանակ գնողներուն մասնաւոր զեղչ:

